

ԿԱՐԾԻՔ

Գոռ Աշոտի Գալստյանի «Է-ԺԲ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գոռ Գալստյանի ատենախոսությունը նվիրված է 7-12-րդ դարերի հայոց տոմարի մեկնություններին՝ ստեղծված Անանիա Շիրակացու, Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավազի և Սամուել Անեցու կողմից:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, ատենախոսության ժամանակագրական սահմանները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, տեսական և գործնական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Առաջին գլուխը վերնագրված է **«Է դար. Անանիա Շիրակացին և իր «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը»**: Այն բաժանված է չորս ենթագլխի՝ 1.1 **Է դարի հայոց տոմարի մեկնությունների առանձնահատկությունները**, 1.2 **«Անանիա Շիրակացի. տոմարական ժառանգությունը»**, 1.3 **«Հայոց տոմարի մեկնություններին վերաբերող նախակրթությունները «Գիրք պատճառաց»-ում**», 1.4 **«Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագիրը»**: Այս գլխում ատենախոսը ընդհանուր կերպով անդրադառնում է մեկնության ժանրին և

ուրվագծում է նրա զարգացման ընթացքը: Այնուհետև անդրադառնում է տոմարի մեկնության ժանրին, որտեղ հեղինակը դասակարգված ներկայացնում է տոմարի մեկնությունների ստեղծման նպատակները՝ ներառելով նաև, դրանց ընդգրկվածության առանձնահատկությունները հայ մատենագրության մեջ:

Ատենախոսը համառոտ ներկայացրել է հայ տոմարական ու տոմարագիտական մտքի ռահվիրայի՝ Անանիա Շիրակացու կյանքը, նրա տոմարական ժառանգությանը՝ ի մասնավորի նրա տոմարական մեկնությունները: Տոմարի մեկնության համատեքստում դիտարկում է նաև Անանիա Շիրակացու տոմարի մեկնողական ճառերը (Ի Յայտնութեան Տեառն և Զատկի), և աշխատանքի համապատասխան հատվածներում կատարում է դրանց մանրամասն քննությունը: Կարևոր նշանակություն ունի 1.3 ենթագլուխը, որտեղ Գ. Գալստյանը առաջին անգամ հրատարակում և մեկնաբանում է Գրիգոր Աբայանի կազմած «Գիրք պատճառաց» անտիպ ժողովածուում (ՄՄ 1879) առկա տոմարի մեկնություններին վերաբերող տարբեր մեջբերումներ: Ուշագրավ է այս մեջբերումների հաղորդած տեղեկությունների բաղդատությունը *«Թուղթ երանելոյն Պողոսի Տարօնացոյ յաղթող ախոյեան վարդապետի Ընդդէմ Թէոփիսարեայ հոռոմ փիլիսոփային»* աշխատության համապատասխան հատվածների հետ:

Առաջին գլխում ամենաընդարձակը, թերևս, վերջին ենթագլուխն է, որտեղ հեղինակը ներկայացնում է «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի պարունակած կանոնների հիմնական մասի համապարփակ ուսումնասիրությունը: Առավել նկատելի է հեղինակի կատարած աշխատանքը՝ կապված թվականի սահմանման և դրա դրսևորումների (օլիմպիադ, ինդիկտիոն, հոբելյան, նոնոս, իդոս) վերաբերյալ, ներկայացվում են, թե ինչու են ստեղծվել դրանք, բերվում են նաև վերջիններիս վերաբերող աստվածաշնչյան վկայությունները, նաև կատարվում են որոշակի հաշվարկներ՝ նպատակ ունենալով ցույց տալու դրանց կիրառման եղանակները: Այստեղ առավել մանրամասն քննարկված է մեկնության «Զի՞նչ է տոմար» հատվածը, որտեղ ատենախոսը ներկայացնում է «տոմար» բառի մերօրյա

ընկալումները, այնուհետև մանրամասն քննարկում մեկնության փոխանցած իմաստները: Այս գլխում մեկնաբանված են, թե ինչ են կիսակը, կրկնակը, վերադիրը, յոթներյակը, նահանջը և այլն, որոնք հետագայում հարկ եղած դեպքերում համեմատվում են Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավազի և Սամուել Անեցու մեկնությունների նույնաբնույթ կանոնների հետ:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«Ժ-ԺԱ դարեր, Հովհաննես Կոզեռնը և իր «Մեկնութիւն տոմարի» բնագիրը»**: Այն կազմված է երկու ենթագլխից՝ 2.1 «Հովհաննես Կոզեռն Տարոնեցի տոմարագետը», 2.2 «Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագիրը» խորագրերով: Այս գլխում հեղինակը, հենվելով մատենագրական տեղեկությունների վրա, վերհանում է Կոզեռնի կյանքին ու գործին վերաբերող կարևոր իրողությունները: Այստեղ արժեքավոր է այն փաստը, որ հեղինակը կարևորություն է տվել Շ-եակ առաջին շրջապտույտի ընթացքում տեղի ունեցած Ծռագատիկներին՝ անդրադարձ կատարելով վերջիններիս առիթով ստեղծված տոմարական երկերին՝ դրանք դիտարկելով քննարկվող ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների համապատկերում: Ատենախոսը համակարգված ներկայացնում է նաև Հովհաննես Կոզեռնի անվամբ՝ ՄՄ ձեռագրացուցակների պահպանած 70 ձեռագրերը: 2.2-ում քննարկվում են Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» բնագրի բովանդակային առանձնահատկությունները: Նշվում է բնագրի՝ մեզ հայտնի երեք հրատարակության մասին, որից երկուսը հիմք է ծառայում հեղինակի համար բովանդակային վերլուծություն կատարելիս: Ատենախոսը կանգ է առնում այն հանգամանքի վրա, որ հայոց թվականության սկիզբը Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» երկում առնչվում է ներկա 552/553 թվականին: Հեղինակը նշում է, որ մեկնության մեջ այն զուգորդվում է համաժամանակյա տարբեր թվականների: Ըստ նրա՝ *առհասարակ հայոց թվականության ելակետն առնչվում է նաև 562 թ.-ին, որը երևում է այլ մեկնություններում առկա փարեթվերի քննությունը կատարելիս*: Քննարկելով մասնագիտական գրականության մեջ առկա

իրողությունները՝ Գ. Գալստյանը ներկայացնում է հաշվարկային համապատասխանությունները երկու սկզբների՝ Հայոց մեծ թվականության 1 = 552/553՝ հուլյան տոմարով 553 թ. և 10-րդ = 561/ 562 հուլյան տոմարով միայն 562 թվականների:

Այս գլխում կարևոր է նաև այն հանգամանքը, որ օգտագործվում են երկու անտիպ ձեռագրեր՝ ՄՄ 5809 և ՄՄ 8716, որոնց օգնությամբ հեղինակը փորձում է որոշ ճշգրտումներ կատարել «Զի՛նչ է թուականը» տոմարական հատվածում:

Կարելի է առանձնացնել այն, որ այստեղ ներկայացվել է Հովհաննես Կոզեռնի խմբագրած հայոց տոմարի «Պատճեն»-ը, միաժամանակ կազմել և ներկայացրել է 1004/1007 թթ.-ի քառամյակի «Պատճեն»-ը:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«ԺԱ դարավերջից - ԺՔ դարերում ստեղծված «Մեկնութիւն տոմարի» բնագրերի ընդհանուր բնութագիրը»**: Այն ևս բաղկացած է երկու ենթագլխից, որոնք կոչվում են 3. 1 «Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տոմարի» երկը», 3. 2 «Ստեփանոս Մեծրկա որդու և Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» բնագրերը»: Առաջին ենթագլխում հեղինակը անդրադառնում է Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի մի քանի գլուխների, ներկայացնում դրանցում առկա կանոնների քննությունը: Հեղինակն ընտրել է *ժողովածուի այն մասերը, որոնց պարունակած կանոնները համեմատության եզրեր ունեն քննարկված մյուս բնագրերի նույնաբնույթ սահմանումների հետ*: Աշխատանքի այս հատվածի առանցքը Հովհաննես Սարկավազի կատարած կանոնական փոփոխությունները և դրանց պատճառների քննությունն է՝ վերադրի և հարականների համակարգերի ծավալով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ *Հովհաննես Սարկավազի՝ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի զատկական լրման առաջին փարին ապրիլի 4-ին սահմանելու փաստը ներկայացրել է «Յաղագս լուսնի» վերաբերյալ կանոնների համեմատական քննությամբ*, որտեղ օգտագործել է նաև վերոնշյալ անտիպ ձեռագրերի հաղորդած տեղեկությունները:

Կարևոր նշանակություն ունի ատենախոսության երկրորդ ենթագլխի՝ Ստեփանոս Մեծրկա որդուն և նրա կազմած 532-ամյա Զատկացուցակին վերաբերող հատվածը, որտեղ Գ. Գալստյանը ներկայացնում է *փարվա ընթացքում փեղի ունեցող փոների, արևային փարվա եղանակների ու ասփղագիփական երևույթների ամսաթվային համարժեքները՝ ըստ հուլյան և Ստեփանոս Մեծրկա որդու կազմած անշարժ տոմարի նախագծի*: Դրանք վերաբերում են «Կաղանդ հոռմայեցոց», «Յայտնութին», «Տեառնընդառաջ», «Գարնանամուտ», «Աւետիք յունաց եւ հոռմայեցոց», «Աւետեաց Աստուածածնի», «Անկաստեղ», «Ելաստեղ», «Ամառնամուտ», «Աստուածածին», «Սուրբ խաչ», «Աշնանամուտ», «Պապանձումն Զաքարիայի» և այլ իրողությունների: Էական է այն, որ հեղինակը վերականգնում է Ստեփանոս Մեծրկա որդու կազմած Զատկացուցակի երկու 19-ամյակի պատկերը՝ ըստ հուլյան և հայոց (Ստեփանոս Մեծրկա որդու) անշարժ տոմարների՝ հույս հայտնելով, որ առաջիկայում կնախաձեռնի Զատկացուցակի՝ վերականգնված ամբողջական տարբերակի հրատարակումը: 3.2-ի հաջորդ հատվածում խոսվում է Սամուել Անեցու «Մեկնութին տոմարի» բնագրային առանձնահատկությունների մասին, որոնք հիմնականում վերաբերում են հարականների համակարգին: Կարևոր է նաև այն, որ մեկնության «Վասն պատճենի հոռմայեցոցն եւ վասն կրկնակաց եւ կիսակաց» հատվածում ատենախոսը ներկայացնում է պարսկերեն և արաբերեն որոշ եզրույթների գործածումը հայ տոմարական գրականության մեջ:

Գնահատելի է նաև ատենախոսության «Հավելված» բաժինը, որտեղ հեղինակը «Մեկնութին տոմարի Անդրեասայ» բնագրի հենքի վրա տալիս է մեկնությունների պարունակած կանոնների համեմատական պատկերը:

Նշենք, որ սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, սակայն մեծ ծավալ են կազմում տողատակերը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝

Կարևորենք առանձնապես՝

Ա. ատենախոսության խնդիրներից՝ Շ-եակ առաջին շրջապտույտում տեղի ունեցած Ծռագատիկներին առնչվող պատմական իրողությունների քննությունը:

Բ. Ստեփանոս Մեծրկա որդու կազմած 532-ամյա զատկացուցակի՝ երկու 19-ամյակների շրջանակում վերականգնումը եղած սուղ տեղեկությունների հիման վրա:

Հարգարժան գիտխորհուրդ, հարգելի՛ ներկաներ, բարձր գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը՝ կարևոր եմ համարում կատարել հետևյալ դիտարկումները՝

Ատենախոսության մեջ կան 1. մտքի անհարթություններ ու լեզվական նուրբ անճշտություններ՝

1. ա) Էջ 3-Տոմարն առնչվել է բնատնտեսական տարվա հետ...., տոմարագիտությունն.....մշտապես ընդգրկված լինելով վարդապետարաններում և համալսարաններում, էջ 26 - ենթադրություն կատարել-ենթադրել, էջ 29-կատարում է հիշատակություն-հիշատակում է, էջ 42 - հանգեցնում է այն մտահանգմանը,

բ) Ը և ն հոդերի ոչ ճիշտ կիրառում՝ էջ 24 – վերնագիրը ունեցել է....,

գ) Էջ 29նա թողել է մատենագրական մեծ ժառանգություն, որում իրենց ուրույն տեղն ունեն Հայոց տոմարի մեկնությունները: Դրանք (մեկնությունները) առկա են ինչպես Մեկնություն տոմարի Անդրեասայ երկում, տոմարի ընդարձակ մեկնություններում ևն:

դ) Էջ 77- Առաջին գլխի ամփոփիչ 3-րդ կետում այնքան էլ հաջող չէ Անդրեասի տոմարի մեկնության նոր վերնագրումը:

2. Էջ 19-Մեկնությունների ժանրային առանձնահատկություններին անդրադառնալիս երբ առանձնացվում է **պարաֆրասիսը, որպես համառոտ մեկնություն** (բառացի թարգմանություն), հպանցիկ կարելի էր խոսել նաև **միմեսիսի** (պատճենում, ընդօրինակում) ու **կատարսիսի** (հստակեցում, պարզաբանում) մասին և ցույց տալ,

թե Հայոց տոմարի մեկնություններն արդյո՞ք միմիայն պարաֆրասիսին են համապատասխանում:

3. Էջ 60 – Երբ խոսվում է այն մասին, որ *Աստված սրեղծեց Արեգակը վասն հասարակավորության*, հեղինակը բացատրում է ըստ Ռ. Ղազարյանի Գրաբարի բառարանի՝ միաբանություն իմաստով: Սակայն առավել հստակ է օրահավասարի իմաստը, քանի որ միտումը այն գարնանային օրահավասարի հետ կապելն է, որից հետո միայն կարող էր լինել Փրկչի չարչարանքն ու Հարությունը, որը սահմանվում էր լուսնային հաշվումներով:

4. Էջ 27*Լուսնի 19-ամյա լրման աղյուսակներում 7 փարիներին ավելացնում է նահանջյալ ամիսները՝ 30-ական օրով, որի շնորհիվ լրման ամսաթվերն ընկնում են գարնանային գիշերահավասարից հետո, և 19-ամյակում արևային ու լուսնային փարիները դառնում են համարժեք:* Այստեղ միմյանց են խառնվել տարբեր տոմարական խնդիրներ. առաջինը՝ 30-ական օր ավելացնելը կատարվել է՝ գարնանային օրահավասարից առաջ լրման ամսաթիվ չունենալու համար, իսկ արևային ու լուսնային տարիների հավասարեցումը կատարվում է վերադիրների միջոցով, այն է՝ 19-ամյակի յուրաքանչյուր տարում 11, իսկ վերջին տարում՝ 12 օր ավելացնելու միջոցով:

5. Էջ 35-ի վերջին մեջբերումում կա բնագրային սխալ, որը կարելի էր նկատել, այսպես հայոց տոմարով Կույսի ավետման շաբաթագիրը տալիս գրված է՝ քաղոց 11+կրկնակը՝ 1 + յոթնյակը՝ 6 = 18, որից հանվելու է հինգ (ուղղել՝ յոթ) և յոթ = 4:

6. Էջ 36 - Ճիշտ կլիներ հաջորդ մեջբերման դեպքում հստակեցնել, պարզել, թե «յայսմ արէ»-ն որ օրվան է վերաբերում:

7. Էջ 64-66: Որոշ խնդիրներ բացատրելու համար խախտված է ատենախոսության ժամանակային սահմանը, օր. անդրադարձը Հակոբ Ղրիմեցուն, որը բավականին ընդարձակ է:

8. Էջ 47- Խոսելով Անդրեասի 200-ամյակի 17 կանոնների մասին, թվում է, թե որ կանոններն են մեկնված և բերում է Հայտնության ամիս-ամսաթիվը, որը համընկնում է Արաց 30-ին: Վրիպել է այստեղ հեղինակը, քանի որ Արաց 30-ին Հայտնությունը եղել է 553-556 թթ. քառամյակում, իսկ Անդրեասի զատկացուցակն ավարտվել էր 552 թ.-ին, իսկ Հայտնությունը եղել է Արաց 29-ին:

9. Էջ 147 - Անհասկանալի է ձևակերպված հետևյալ միտքը. «Կարևոր ենք համարում նշել, որ Մեծրկա որդու Շ-եակն սկսում է 2-րդ շրջապտույտով, **որի հայոց շարժական տոմարի հարակաները համարժեք են**, այսինքն՝ տոմարագետը հարականների համակարգը հաշվել է նավասարդի 1 = մարտի 1 կտրվածքով»:

Եթե	Նաւ. 1 = մարտի 1,	հարական 0 է
Այա	Հոռի 1 = մարտի 31	հարական՝ 30
Սահմի 1 =	ապրիլի 1-	հարական՝ 0
Տրէ 1 =	մայիսի 1	հարական՝ 0
Քաղոց 1 =	մայիսի 31	հարական՝ 30 ևն:

Լավ կլիներ, որ Ստեփանոս Մեծրկա որդու հարականների համակարգն ամբողջությամբ ներկայացվեր:


10. Էջ 147 - Մեկ օրով վրիպել է նաև ավելեաց 1 = փետրվարի 23 հաշվարկում (ուղղել՝ փետրվարի 24): Նահանջ տարիներին ավելեաց օրերը դառնում են 6 ևն:

Ավարտելով մեր խոսքը՝ ասենք, որ նկատված թերությունները չեն ստվերում ատենախոսի կատարած տարողունակ աշխատանքը: Ատենախոսության եզրակացությունները տրամաբանորեն բխում են քննարկված նյութից: Հեղինակին հաջողվել է իր առջև դրված խնդիրների լուծման միջոցով հասնել ատենախոսության նպատակի իրագործմանը:

Այսպիսով՝ Գոռ Աշոտի Գալստյանի «**Է-ԺԲ դարերի հայոց տոմարի մեկնությունները (պատմա-աղբյուրագիտական ուսումնասիրություն)**» խորագրով

թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ Թ. 00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ:

Ուստի, միջնորդում եմ ԵՊՀ Կրոնագիտության 068 գիտական խորհրդին՝ Գոռ Գալստյանին շնորհելու իր հայցած գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.թ., դոց. Գայանե Սիմոնի Սիմոնյան 

Գայանե Սիմոնյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քննություն



բ.գ.թ., դոց. Մ. Վ. Հովհաննիսյան

05.06. 2024 թ.